Նոյն գունակ ծախ զգեստի 24 միլիոն անձանց, եթէ հարուստից և եթէ աղքատաց համարեցաք իւրաքանչիւր անձանց 10 դահեկան երծաթ, որում բովանդակի 240 միլիոն և 24000 բիւր մաքս և հարկս, սորայ 'ի հարիւրին հինգ մտանելոց է գանձարանն բովանդակի	12,000,000
Նոյն գունակ գին աղից իւրաքանչ անձանց մին դահեկանի 'ի մի տարւոջ 'ի վերայ 24 միլիոն անձանց դահեկան երծաթովն .	24,000,000
Տարեկան եկամուտն բովանդակի դահեկան երծաթի .	132,000,000

Մին հազար երեք հարիւր և 20 լաք, կամ 13 քրոր, 20 լաք, թող զայլ մասնաւոր եկամտից որ ոչ յիշեմք աստի, և 'ի վեր յիշեցեալ 13 քրօր, 20 լաք դահեկանն համապատասխանի 66 հարիւր հազար թումման պարսոց 'ի բարբառս հնդկաց 13 քրօր և 20 լաք ըռուփի, և 'ի եւրոպացւոց փոքր աւելի կամ պակաս 62 միլիոն սպանիացւոց մառչիլ և 'ի Օսմանցւոց երկու հարիւր վաթսուն հազար քիսայ, և ըստ հայոց տասն երեք հազար երեք հարիւր բիւր դահեկան երծաթի, թէպէտ 'ի վեր յիշեցեալ քանակութիւնն յոյժ ծանդր երևի